Կարգապահական գործ թիվ ԿԳ-24180

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՎԱԳ ՄՈՎՍԵՍԻ ԼԱԼԱՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի և Միքայել Դանիելյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Մուրադյանի **(այսուհետև նաև՝ Դիմող կամ Ընկերություն)** և փաստաբան Ավագ Լալայանի **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**,

քննության առնելով փաստաբան Ավագ Մովսեսի Լալայանի (արտոնագիր՝ թիվ 535), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

«Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Մուրադյանը, դիմելով Պալատ, հայտնել է, որ Ընկերությունն, ի դեմս նախկին տնօրեն Արմեն Մելիքյանի, Կարեն Սահակյանի հետ 01.06.2018թ. կնքել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր, համաձայն որի՝ Կարեն Սահակյանն ընդունել է իր կողմից 845.000 եվրոյի վնաս պատճառելու հանգամանքը, որը պարտավորվել է վճարել մինչև 05.11.2019թ.:

22.06.2020թ. Ընկերության ներկայացուցիչ փաստաբան Ավագ Լալայանը դիմում է ներկայացրել ՀՀ սնանկության դատարան՝ Կարեն Սահակյանին սնանկ ճանաչելու պահանջով (թիվ ՍՆԴ/1506/04/20 քաղաքացիական գործ):

Նշված գործով Դատարանի 10.11.2020թ. որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, իսկ Կարեն Սահակյանի պարտատերերի առաջին ժողովը տեղի է ունեցել 26.05.2022թ., որին Ընկերության անունից մասնակցել է փաստաբան Ավագ Լալայանը, ով դեմ է քվեարկել սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացված պարտապանի գույքի վաճառքի ծրագրին, որը նախատեսել է պարտապանի գույքի

հրապարակային սակարկություններով վաճառքը, ինչն Ընկերության շահերին ակնհայտ դեմ է եղել և առավելապես բխել է պարտապանի շահերից:

Միաժամանակ, Ընկերությունը, ինչպես նաև դրա նախկին տնօրեն Արմեն Մելիքյանը հանդիսացել են թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանողներ, իսկ փաստաբան Ավագ Լալայանը՝ Արմեն Մելիքյանի ներկայացուցիչը:

Դիմողը հայտնել է, որ նշված գործով Արմեն Մելիքյանի դեմ որևէ նյութաիրավական պահանջ ոչ հայցադիմումով և ոչ էլ դատաքննությամբ ներկայացված չէ, իսկ Ընկերությունն, իր հերթին, ամբողջությամբ առարկել է ներկայացված հայցադիմումի դեմ, մինչդեռ փաստաբան Ավագ Լալայանը, որպես իր վստահորդ Արմեն Մելիքյանի ներկայացուցիչ, դիրքորոշում է ներկայացրել հայցադիմումն ամբողջությամբ ընդունելու մասին, դատական նիստերին Ընկերության թե՛ գրավոր և թե՛ բանավոր դիրքորոշումների և միջնորդությունների վերաբերյալ մշտապես դեմ է արտահայտվել:

Դիմողի պնդմամբ, որպես պատասխանող ներգրավված Արմեն Մելիքյանի փաստաբան Ավագ Լալայանը ակնհայտորեն իմացել է այդ անձի և Ընկերության շահերի հակասության մասին, և երբ Ընկերությունն առարկել է հայցադիմումի դեմ, միջնորդություններ է ներկայացրել՝ այդ թվում ապացույցներ պահանջելու մասին, փաստաբան Ավագ Լալայանը Ընկերության առարկությունների և միջնորդությունների վերաբերյալ առարկություն է ներկայացրել՝ փաստացի պաշտպանելով հայցվորի շահերը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 30.01.2025 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 18.02.2025 թվականի բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով դատական նիստերի ընթացքում Փաստաբանը կատարել է Դիմողի շահերին հակասող գործողություններ:

Նշվածի կապակցությամբ Դիմողը ներկայացրել է թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով 05.04.2025, 26.04.2024, 29.05.2024 և 20.01.2025 թվականներին կայացած դատական նիստերի ձայնագրությունները:

Դիմողը Հանձնաժողովի նիստի ընթացքում ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

Դիմողը հավելել է, որ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Արմեն Մելիքյանի անունից ներկայացված հայցադիմումի պատասխանում Փաստաբանը նաև հղում է կատարել այն հանգամանքին, որ Արմեն Մելիքյանն ապօրինի է հեռացվել Ընկերության տնօրենի պաշտոնից և այդ մասով Վրաստանի դատարանում քննվում է նրան տնօրենի պաշտոնին վերականգնելու հարցը:

Դիմողը նաև նշել է, որ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի ընթացքում Փաստաբանի ներկայացված դիրքորոշման բովանդակությունից հետևում է, որ Փաստաբանը տեղեկացված է եղել այն մասին, որ Արմեն Մելիքյանը Ընկերության տնօրեն այլևս չի հանդիսանում:

Դիմողն ընդգծել է, որ Ընկերությունը Փաստաբանին որևէ լիազորագիր չի տվել թիվ

ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով հանդես գալու համար, իսկ այն լիազորագիրը, որին հղում է կատարել Փաստաբանը փաստացի տրվել է ֆիզիկական անձ Արմեն Մելիքյանի կողմից՝ 28.11.2022 թվականին:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ավագ Լալայանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վարդան Մուրադյանի դիմումի վերաբերյալ, սակայն փաստաբանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Կարգապահական վարույթի հարուցումից հետո Փաստաբանը 23.12.2024 թվականին ներկայացրել է առարկություն՝ նշելով, որ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ է ընդունվել 17.05.2023 թվականին և այդ գործով կայացել են մի շարք նիստեր, որոնց մասնակցել է նաև Դիմողը, ինչի հաշվառմամբ, գտել է, որ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել՝ Օրենքով սահմանված վաղեմության ժամկետը անցնելու պատճառով:

Փաստաբանը հավելել է, որ թույլ չի տվել որևէ կարգապահական խախտում, իսկ իր վստահորդի և Դիմողի շահերի միջև հակասություն առկա չէ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 30.01.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 10.02.2025 թվականի ներկայացված գրությամբ ըստ էության պնդել է նախկինում հայտնած դիրքորոշումը՝ պահանջելով կարճել կարգապահական վարույթը:

Փաստաբանի գրությանը կից ներկայացվել է վերջինիս վստահորդ Արմեն Մելիքյանի դիրքորոշումը: Վերջինս հայտնել է, որ, հանդիսանալով Ընկերության տնօրեն, Փաստաբանի հետ կնքել է պայմանագիր, ինչից հետո տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա Փաստաբանը ներկայացրել է Ընկերության շահերը՝ Ընկերության անունից 22.06.2020 թվականին դիմելով ՀՀ սնանկության դատարան Կարեն Սահակյանին սնանկ ճանաչելու պահանջով՝ հիմք ընդունելով Ընկերության և Կարեն Սահակյանի հետ 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագիրը:

Արմեն Մելիքյանի պնդմամբ, Դատարանի 10.11.2020թ. որոշմամբ հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, իսկ 26.05.2022թ. տեղի ունեցած պարտատերերի առաջին ժողովին իր հանձնարարությամբ մասնակցել է նաև Փաստաբանը:

Արմեն Մելիքյանի պնդմամբ, թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել՝ պահանջելով պատճառված վնասի հատուցման պահանջի զիջման համաձայնությունը ճանաչել չկնքված, որպես հետևանք անվավեր ճանաչել Ընկերության և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման կատարման պայմանագիրը:

Արմեն Մելիքյանը նշել է, որ գործի մասին տեղեկանալուց հետո ինքը որևէ տեղեկատվություն չի ունեցել այն մասին, որ իր՝ որպես Ընկերության տնօրենի լիազորությունները դադարեցվել են, իսկ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով իր՝ որպես ֆիզիկական անձի շահերը ներկայացնելու համար դիմել է Փաստաբանին:

պարզաբանել է նրան, որ ինքը, հանդիսանալով Ընկերության տնօրենը, կարծում է, որ իր և Ընկերության շահերի միջև հակասություն չկա, ավելին՝ հայցը բավարարելու դեպքում, Ընկերությունն իրեն կապահովագրի իր դեմ վնասների հատուցման պահանջ ներկայացնելուց:

Արմեն Մելիքյանի պնդմամբ, ինքը, հանդիսանալով Ընկերության տնօրեն, փաստաբան Ավագ Լալայանի նախկին վստահորդի ներկայացուցիչը, վերջինիս պաշտոնապես տեղեկացրել է, որ Ընկերությունը տալիս է իր համաձայնությունը, չի առարկում, ավելին՝ այլ փաստաբաններին չվստահելով պնդում է, որ նա իրականացնի իր ներկայացուցչությունը թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով:

Ըստ Արմեն Մելիքյանի՝ Փաստաբանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում, նրան որևէ գաղտնի տեղեկատվություն չի տրամադրվել, հետևապես՝ վերջինիս կողմից նմանատիպ տեղեկատվություն իր ներկայացուցչությունը իրականացնելիս, ի վնաս Ընկերության երբևէ չէր կարող վկայակոչվել կամ օգտագործվել:

Փաստաբանը Հանձնաժողովի նիստի ընթացքում ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը՝ հավելելով, որ սնանկության, ինչպես նաև հետագա այլ գործերով հանդես է եկել Ընկերության անունից Ընկերության տնօրեն Արմեն Մելիքյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա:

Փաստաբանը հավելել է, որ իր և Ընկերության միջև կապը պահել է հենց Արմեն Մելիքյանի միջոցով, ով երբևէ չի հայտնել իրեն այն մասին, որ իր լիազորությունները որպես տնօրենի դադարեցված են եղել, ինչի մասին վկայում է Ընկերության որպես Վրաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձի վերաբերյալ քաղվածքը, ուր որպես տնօրեն նշած են ինչպես Արմեն Մելիքյանը, այնպես էլ Վարդան Մուրադյանը:

Փաստաբանի դիտարկմամբ, Դիմող-Ընկերության նոր տնօրեն Վարդան Մուրադյանը պարտավոր է եղել տեղեկացնել Փաստաբանին այն մասին, որ առկա է շահերի հակասության խնդիր, մինչդեռ գործով տևական ժամանակ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով վերջինս որևէ ակնարկ չի կատարել:

Փաստաբանը նաև հայտնել է, որ Ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ պետք է ներկայացներ վերջինիս շահերը դատարանում՝ Կարեն Սահակյանի սնանկության վարույթով:

Փաստաբանի դիտարկմամբ, թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով շահերի հակասությունը եղել է Արմեն Մելիքյանի և Վարդան Մուրադյանի շահերի միջև, այլ ոչ թե Արմեն Մելիքյանի և Ընկերության: Փաստաբանի պնդմամբ, Արմեն Մելիքյանն իրեն լիազորել է որպես Ընկերության տնօրեն:

Փաստաբանը նշել է, որ շահերի հակասության հարցը ի հայտ գալուց հետո Արմեն Մելիքյանը դադարեցրել է իր լիազորությունները՝ 06.11.2024 թվականի գրությամբ:

Փաստաբանը պնդել է դիրքորոշումն առ այն, որ կարգապահական պատասխանատվության վաղեմության ժամկետները բաց են թողնվել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.12.2024թ. թիվ 427-Ա/ԿԳ-24180 որոշմամբ փաստաբան Տիգրան Սամվելի Ղազարյանի նկատմամբ **Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև**

նաև՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կամ Կանոնագիրք) 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

27.12.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 27.02.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-9-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 02.04.2025թ. ժամը 18:30-ին, 07.05.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Ընկերության, ի դեմս նախկին տնօրեն՝ Արմեն Մելիքյանի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր, համաձայն որի՝ Կարեն Սահակյանն ընդունել է իր կողմից 845.000 եվրոյի վնաս պատճառելու հանգամանքը, որը պարտավորվել է վճարել մինչև 05.11.2019թ.: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությամբ, Փաստաբանի կողմից ներկայացված Արմեն Մելիքյանի գրությամբ, թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով Ընկերության անունից ներկայացված Կարեն Սահակյանին սնանկ ճանաչելու մասին դիմումի, թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով Դատարանի 04.08.2020 թվականի վճռով:*

2. Փաստաբանը 15.06.2020 թվականին լիազորվել է հանդես գալ Ընկերության անունից, իսկ 22.06.2020 թվականին թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով Ընկերության անունից ներկայացրել է դիմում՝ Կարեն Սահակյանին սնանկ ճանաչելու մասին՝ տրված հանձնարարության համապատասխան: ***Նշված փաստը հաստատվում է*** *Ընկերության անունից 15.06.2020 թվականին Փաստաբանին տրված լիազորագրով, Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանի բացատրությամբ (պայմանագրի առարկայի և տրված հանձնարարության մասով), ինչպես նաև թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով 22.06.2020 թվականի դիմումով:*

3. Թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով պարտապան Կարեն Սահակյանը ճանաչվել է սնանկ Դատարանի 04.08.2020 թվականի վճռով: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով Դատարանի 04.08.2020 թվականի վճռով, ինչպես նաև թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործի վերաբերյալ «դատական»*

տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:

4. Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայցադիմում ընդդեմ պատասխանողներ՝ Ընկերության, Կարեն Սահակյանի և Արմեն Մելիքյանի՝ պահանջելով *պատճառված վնասի հատուցման պահանջի զիջման համաձայնությունը ճանաչել չկնքված, որպես հետևանք անվավեր ճանաչել «Սքայլըլլոու Թրեյդինգ Սըլուշենս» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման կատարման պայմանագիրը:* ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրությամբ, Փաստաբանի կողմից ներկայացված Արմեն Մելիքյանի գրությամբ, ինչպես նաև թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանող Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությունն իրականացնում է Փաստաբանը: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրությամբ, Փաստաբանի կողմից ներկայացված Արմեն Մելիքյանի գրությամբ, Արմեն Մելիքյանի կողմից Փաստաբանին տրված 28.11.2022 թվականի լիազորագրով, թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Արմեն Մելիքյանի անունից Փաստաբանի ներկայացված հայցադիմումի պատասխանով, ինչպես նաև նշված գործով Դատարանի 01.11.2023 թվականի որոշմամբ:*

6. Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով **պատասխանող՝ Արմեն Մելիքյանի անունից Փաստաբանը 06.06.2023 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան** «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի վերաբերյալ՝ նշելով, որ ***«հայցադիմումը հիմնավոր է»,*** *«Ընկերության, ի դեմս Արմեն Մելիքյանի, որպես տնօրեն և Կարեն Սահակյանի միջև 01.06.2023թ.*[1] *կնքվել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր:* ***Պայմանագիրը կնքելիս Արմեն Մելիքյանը որևէ լիազորագրի հիման վրա հանդես չի եկել որպես «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ*** *և պայմանագիրը կնքել է առանց համապատասխան լիազորություններ ունենալու, հետագայում Կարեն Սահակյանի և Ընկերության միջև կնքված* ***պայմանագրին «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն հավանություն չի տվել:*** *... Պարտքը ճանաչելու և կատարելու մասին* ***պայմանագիրը համարում ենք շինծու գործարք*** *և գտնում ենք, որ իրականում այն պետք է կնքվեր «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև:... Ընկերության ներկայիս տնօրեն Վարդան Մուրադյանը, քանի որ բանակցությունները և խոսակցությունները վարել միայն Արմեն Մելիքյանը:* ***Ներկայումս Արմեն Մելիքյանը ապօրինի հեռացվել է Ընկերության տնօրենի պաշտոնից*** *...»:* ***Նշված փաստը հաստատվում է*** *Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով, Արմեն Մելիքյանի անունից Փաստաբանի ներկայացված հայցադիմումի պատասխանով:*

7. Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանող՝ **Ընկերությունը ներկայացված հայցադիմումի պատասխանով առարկել է** «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի վերաբերյալ՝ պահանջելով մերժել այն: ***Նշված փաստը հաստատվում է*** *Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Ընկերությունը ներկայացված հայցադիմումի պատասխանով:*

8. Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Փաստաբանն ընդհուպ մինչև 05.11.2024 թվականը չի դադարեցրել պատասխանող՝ Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությունը՝ այդ թվում վերջինիս՝ որպես նոր վստահորդի, և Ընկերության՝ որպես նախկին վստահորդի շահերի հակասության մասին իրազեկվելուց հետո: Արմեն Մելիքյանը

---

[1] Ընկերության, ի դեմս նախկին տնօրեն՝ Արմեն Մելիքյանի և Կարեն Սահակյանի միջև պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր կնքել է **01.06.2018 թվականին**

փաստացի հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից 06.11.2024 թվականին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի և Փաստաբանի բացատրությամբ, Փաստաբանի կողմից ներկայացված Արմեն Մելիքյանի գրությամբ, Արմեն Մելիքյանի 06.11.2024 թվականի դիմումով, ինչպես նաև թիվ ՍԵԴ/0072/02/23 քաղաքացիական գործով դատական նիստերի ձայնագրություններով:*

9. Ընկերությունը Փաստաբանին չի տվել գրավոր համաձայնություն հետագայում իր՝ որպես նախկին վստահորդի մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողի բացատրությամբ: Միաժամանակ, Փաստաբանի կողմից չի ներկայացվել նման համաձայնության առկայության փաստը հավաստող ապացույց, իսկ Արմեն Մելիքյանի գրությամբ ներկայացված պնդումները չեն կարող վկայել այդպիսի համաձայնության առկայության մասին:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ավագ Մովսեսի Լալայանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ավագ Մովսեսի Լալայանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև **Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ նույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ նույն օրենքով*

սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, փաստաբան Ավագ Լալայանին վերագրում է շահերի հակասության պայմաններում ի վնաս նախկին վստահորդի գործելու, ինչպես նաև վստահված գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվության, որը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար, բացահայտելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք Ընկերությունը հանդիսացել է փաստաբան Ավագ Լալայանի նախկին վստահորդը,***
- ***արդյո՞ք թիվ ՍԵԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Ընկերության և Արմեն Մելիքյանի շահերը հակասում են միմյանց,***

- ***արդյո՞ք փաստաբան Ավագ Լալայանը կարող էր ստանձնել Արմեն Մելիքյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով,***
- ***արդյո՞ք թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով առկա է նախկին վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ և արդյո՞ք այդ գործում տվյալ տեղեկատվությունները, որոնց տիրապետում է փաստաբան Ավագ Լալայանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություններ ստեղծել նոր վստահորդի համար:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ

- **Ընկերության, ի դեմս նախկին տնօրեն՝ Արմեն Մելիքյանի** և Կարեն Սահակյանի միջև **01.06.2018թ. կնքվել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր**, համաձայն որի՝ Կարեն Սահակյանն ընդունել է իր կողմից 845.000 եվրոյի վնաս պատճառելու հանգամանքը, որը պարտավորվել է վճարել մինչև 05.11.2019թ.:
- **Ընկերությունը դիմել է Փաստաբանին**, որպեսզի վերջինս **ներկայացնի Ընկերության շահերը դատարանում՝ Կարեն Սահակյանի սնանկության գործով**, ինչի կապակցությամբ կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման **պայմանագիր և տրվել է լիազորագիր: Փաստաբանը տրված հստակ հանձնարարության շրջանակներում** Ընկերության անունից թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործի շրջանակներում ներկայացրել է դիմում՝ Կարեն Սահակյանի սնանկ ճանաչելու մասին՝ **դրա հիմքում դնելով Ընկերության,** ի դեմս նախկին տնօրեն Արմեն Մելիքյանի **և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագիրը**: Թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով **Կարեն Սահակյանը ճանաչվել է սնանկ, իսկ Փաստաբանը հանդես է եկել որպես Ընկերության ներկայացուցիչ**: Ընդ որում, Ընկերությունը Փաստաբանին չի տվել գրավոր համաձայնություն հետագայում իր՝ որպես նախկին վստահորդի մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար:
- **Հետագայում թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայցադիմում** ընդդեմ **պատասխանողներ՝ Ընկերության**, Կարեն Սահակյանի և **Արմեն Մելիքյանի**, պահանջելով՝ *պարտճառված վնասի հատուցման պահանջի գիջման համաձայնությունը ճանաչել չկնքված, որպես հետևանք* ***անվավեր ճանաչել «Սքայլըլլոու Թրեյդինգ Սըլուշենս» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման կատարման պայմանագիրը:***

Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանող Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությունն իրականացրել է Փաստաբանը, ով Արմեն Մելիքյանի անունից **06.06.2023 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան** «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի վերաբերյալ՝ նշելով, որ ***«հայցադիմումը հիմնավոր է»,*** *«Ընկերության, ի դեմս Արմեն Մելիքյանի, որպես տնօրեն և Կարեն Սահակյանի միջև 01.06.2023թ. կնքվել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր:* ***Պայմանագիրը կնքելիս Արմեն Մելիքյանը որևէ լիազորագրի հիման վրա հանդես չի եկել որպես «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ*** *և պայմանագիրը կնքել է առանց համապատասխան լիազորություններ ունենալու, հետևաբար Կարեն Սահակյանի և Ընկերության միջև կնքված* ***պայմանագրին «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն***

հավանություն չի տվել: *... Պարտքը ճանաչելու և կատարելու մասին* ***պայմանագիրը համարում ենք շինծու գործարք*** *և գտնում ենք, որ իրականում այն պետք է կնքվեր «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև:... Ընկերության ներկայիս տնօրեն Վարդան Մուրադյանը, քանի որ բանակցությունները և խոսակցությունները վարել միայն Արմեն Մելիքյանը:* ***Ներկայումս Արմեն Մելիքյանը ապօրինի հեռացվել է Ընկերության տնօրենի պաշտոնից*** *...»:*

Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանող **Ընկերությունը ներկայացված հայցադիմումի պատասխանով առարկել է** «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի վերաբերյալ՝ պահանջելով մերժել այն:

• Թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Արմեն Մելիքյանի և Ընկերության շահերի հակասության մասին իրազեկվելուց հետո Փաստաբանն ընդհուպ մինչև 05.11.2024 թվականը չի դադարեցրել պատասխանող՝ Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությունը, ինչից հետո 06.11.2024 թվականին Արմեն Մելիքյանը փաստացի հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից:

Այս համատեքստում, նախքան Փաստաբանին վերագրվող կարգապահական խախտումների փաստերին անդրադառնալը, Հանձնաժողովը հարկ է համարում քննարկել Փաստաբանի կողմից բարձրացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու Օրենքով սահմանված վաղեմության ժամկետների կիրառելիության հարցին:

Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց երկու տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Նշված կարգավորմամբ սահմանված է այն ժամանակահատվածը, որի ընթացքում համապատասխան սուբյեկտի (վստահորդը կամ այլ իրավասու անձ) կողմից ներկայացված դիմումում նկարագրված հանգամանքները կարող են քննարկվել փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու համատեքստում:

Այսպիսով, նույնիսկ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում՝ այդ թվում նաև հարուցված կարգապահական վարույթի պարագայում, եթե գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերվել է վեց ամիսը լրանալուց և/կամ այդ հիմքը ծագելուց երկու տարի *(իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքով՝ մեկ տարի)* հետո, ապա կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցվածը՝ ենթակա է կարճման:

Հարկ է արձանագրել, որ ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն ցույց տալը հանդիսանում է շարունակական գործընթաց, քանի որ փաստաբանը մասնակցում է մի շարք դատավարական փուլերի: Օրինակ՝ մասնակցում է նախնական դատական նիստերին, դատաքննությանը, բողոքարկում է դատական ակտը, մասնակցում է վերաքննիչ դատարանի դատական նիստերին: Հատկանշական է այն, որ դատավարական ողջ հրալի ժամանակ, եթե պարզենք, թե ինչ վարքագիծ է դրսևորում այդ պահին փաստաբանը, ապա կստացվի,

որ փաստաբանը իրավաբանական օգնություն է տրամադրում վստահորդին: Հետևաբար, անկախ նրանից, թե երբ է սկսվել իրավաբանական օգնության տրամադրման նախաձեռնությունը, միևնույնն է փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու գործողությունը նույնպես հանդիսանում է իրավաբանական օգնության դրսևորում:

Հետևաբար, եթե օրենսդիրը սահմանում է, որ փաստաբանն «իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալ», ապա այդ արգելքի ներքո փաստաբանի, որպես իրավաբանական օգնություն իրականացրած յուրաքանչյուր փաստացի գործողությունն արդեն հակասող վարքագիծ է հանդիսանում:

Հատկանշական է, որ նշված հարցին նաև անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ **իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից**, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:*

*Վճռաբեկ դատարանը գտնում է, որ **յուրաքանչյուր դեպքում** իրավաբանական օգնության բնույթը և շրջանակները պարզելու համար անհրաժեշտ է **ուշադրություն դարձնել փաստաբանի և վստահորդի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիաիրավական հիմքին,** քանի որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցուցաբերվում է համապատասխան պայմանագրի կամ այլ իրավաբանական փաստի հիման վրա: Ընդ որում, նշված դեպքերում նախատեսվում են իրավաբանական օգնության ձևերը և շրջանակները, որոնք փաստաբանը պետք է ցույց տա կոնկրետ անձին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն):*

Նշված վաղեմության ժամկետի հաշվարկի հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելու և կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելու օրենսդրական եզրույթների մեկնաբանությանը:

Կարգապահական պատասխանատվության հիմք

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հասկացությունների մեկնաբանության համար պետք է հիմք ընդունվեն վերոնշյալ վերլուծությունները, ինչպես նաև ներկայումս գործող «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1-ին հոդվածի 4-րդ կետը, որի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ նույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտումն

հատկանիշների առերևույթ առկայությունը: Հետևաբար կարգապահական պատասխանատվության հիմքը սույն դեպքում դրսևորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված արգելքի խախտմամբ: Այսինքն՝ օրենսդիրը նշված դեպքում իրավաբանական օգնության ցուցաբերումը համարում է իրավախախտում, ինչն էլ իր հերթին փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք հասկացությունը դրսևորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց տալով:

Կարգապահական պատասխանատվության հիմքի ծագում

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը իրավաբանական օգնության ցուցաբերումն է, այսինքն՝ փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելը, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Այդ գործողությունները սույն դեպքում դիտարկվում են որպես իրավախախտում, իսկ կարգապահական պատասխանատվության հիմքը ծագում է այդ իրավախախտումը կատարելու պահից: Այն դեպքում, երբ վստահորդի և փաստաբանի միջև իրավաբանական օգնության իրավահարաբերության բնույթից ելնելով այդ իրավախախտումը դրսևորվում է իրավաբանական օգնության մեջ ներառվող տարբեր գործողություններ կատարելով, այդ գործողությունները նույնպես դիտարկվում են որպես իրավախախտում, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակ ծագում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ վերլուծությունները և օրենքի նման մեկնաբանությունը բխում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանված օրինապահության սկզբունքից, քանի որ հակառակ պարագայում, եթե որպես կարգապահական պատասխանատվության հիմքի ծագման պահ գնահատվի վստահորդի կողմից փաստաբանին լիազորագիր տալու պահը, կամ իրավաբանական օգնություն ցուցաբերելու սկիզբը, ապա նման մեկնաբանության դեպքում իրավախախտումը կարող է շարունակվել, սակայն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմությունն անցած լինելու հիմքով փաստաբանը ոչ միայն չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել, այլև կարող է շարունակել տվյալ իրավախախտումը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի նման մեկնաբանությունը բխում է Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներից:»:

Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքով և Կանոնագրքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի կողմից **թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում** պատասխանող Արմեն Մելիքյանին իրավաբանական օգնություն ցույց տալու վարքագիծը **սկսվել է առնվազն 06.06.2023 թվականին, սակայն չի ավարտվել ընդհուպ մինչև 06.11.2024 թվականը**՝ այդ ընթացքում յուրաքանչյուր անգամ պատասխանող Արմեն Մելիքյանի անունից կատարելով այնպիսի դատավարական գործողություններ, որոնք հակասում էին պատասխանող Ընկերության շահերին, որպիսի պայմաններում վերոգրյալ հիմնավորումների համատեքստում Փաստաբանի կողմից կատարվող գործողությունները ձեռք են բերել շարունակական բնույթ, ինչի հաշվառմամբ էլ այդ գործողությունների նկատմամբ հաշվարկվող կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները շարունակել են հոսել:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ չեն անցել Օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետները:

Հաջորդիվ, Հանձնաժողովն, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտմանը, հարկ է համարում արձանագրել, որ.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (...)*

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝ (...)

դ. պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը. (...):

Կանոնագրքի 3.2.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա:* ***Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*** *Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում...:*

Կանոնագրքի 1.4 կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձը (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու*

Նույն կետի 10-րդ պարբերության համաձայն՝ *հակառակորդ կողմ է հանդիսանում փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդմ, Օրենքին համապատասխան, Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, անդրադառնալով փաստաբան-վստահորդ հարաբերություններին, սահմանել է նաև այդ հարաբերություններում հանդես իրավական օգնություն հայցող անձի հասկացությունը, ում օգտին փաստաբանը կատարում է որոշակի գործողություններ իրեն տրված հանձնարարության շրջանակներում:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքների և շահերի բարեխղճորեն պաշտպանելու պարտականությունից բացի, փաստաբանի համար սահմանվում է նաև պարտավորություն յուրաքանչյուր դեպքում դիտարկելու, թե ովքեր են հանդիսանում իր վստահորդի հակառակորդ կողմերը, որպեսզի ողջամտորեն հնարավոր լինի գնահատել ստանձնած հանձնարարության հնարավոր ռիսկերը և իրավական հետևանքները՝ կանխելով իր կողմից Օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտումները:

Այլ կերպ ասած, փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, որպիսի սահմանափակումը կարող է հաղթահարվել բացառապես այն դեպքում, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը այդ կապակցությամբ:

Ընդ որում, փաստաբանի համար նոր գործի ստանձնման արգելք է հանդիսանում այն իրավիճակը, երբ առկա է նախկին վստահորդի վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ նման տեղեկատվության տիրապետումը փաստաբանի կողմից կարող է հանգեցնել կողմերի մրցակցության իրավունքի խախտմանը:

Հետևապես, Օրենքով և Կանոնագրքով սահմանված շահերի բախման ինստիտուտի շրջանակներում այդ մասին վերաբերող կարգավորումները ենթադրում են մի քանի վավերապայմանների առկայությունը՝ մասնավորապես,

- փաստաբանը նախկինում որևէ գործով իրավաբանական օգնություն է ցույց տվել անձի (նախկին վստահորդը),
- փաստաբանը մեկ այլ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս այլ անձի (նոր վստահորդի),
- նախկին և նոր վստահորդների՝ որպես հակառակորդ կողմերի շահերը տվյալ գործով հակասում են միմյանց,
- նախկին վստահորդը գրավոր համաձայնություն չի տվել փաստաբանին՝ հետագայում իր մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ներկայացրել է

Ընկերության շահերը **թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործի շրջանակներում՝** գործելով իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրով սահմանված հստակ հանձնարարության և լիազորագրի սահմաններում: Այսինքն, Փաստաբանի և Ընկերության միջև փաստաբան-վստահորդ հարաբերությունները ծավալվել են բացառապես թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործի շրջանակներում, հետևապես այդ գործից դուրս, Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կարգավորման իմաստով, Ընկերությունը ձեռք է բերել նախկին վստահորդի կարգավիճակ:

Հաջորդիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ **թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում** պատասխանող են հանդիսացել մի քանի սուբյեկտ՝ **Ընկերությունը**, Կարեն Սահակյանը և **Արմեն Մելիքյանը:** Փաստաբանը հանդես է եկել միայն պատասխանող ֆիզիկական անձ Արմեն Մելիքյանի անունից, 28.11.2022 թվականին տրված լիազորագրի հիման վրա, որպիսի պայմաններում Արմեն Մելիքյանը Փաստաբանի համար հանդիսացել է նոր վստահորդ:

Հատկանշական է, որ Փաստաբանն Արմեն Մելիքյանի անունից 06.06.2023 թվականին ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որով հայտնել է, որ *«**հայցադիմումը հիմնավոր է»**, «Ընկերության, ի դեմս Արմեն Մելիքյանի, որպես տնօրեն և Կարեն Սահակյանի միջև 01.06.2023թ. կնքվել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր: **Պայմանագիրը կնքելիս Արմեն Մելիքյանը որևէ լիազորագրի հիման վրա հանդես չի եկել որպես «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ** և պայմանագիրը կնքել է առանց համապատասխան լիազորություններ ունենալու, հետագայում Կարեն Սահակյանի և Ընկերության միջև կնքված **պայմանագրին «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն հավանություն չի տվել:** ... Պարտքը ճանաչելու և կատարելու մասին **պայմանագիրը համարում ենք շինծու գործարք** և գտնում ենք, որ իրականում այն պետք է կնքվեր «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև:... Ընկերության ներկայիս տնօրեն Վարդան Մուրադյանը, քանի որ բանակցությունները և խոսակցությունները վարել միայն Արմեն Մելիքյանը: **Ներկայումս Արմեն Մելիքյանը ապօրինի հեռացվել է Ընկերության տնօրենի պաշտոնից** ...»:*

Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ նշվածով Փաստաբանն ըստ էության իր նոր վստահորդ Արմեն Մելիքյանի շահերը ներկայացրել է այնպիսի տեսանկյունից, որ առերևույթ առաջացել է հակասություն Փաստաբանի նոր վստահորդ Արմեն Մելիքյանի և նախկին վստահորդ Ընկերության շահերի միջև, քանի որ Ընկերությունն, իր հերթին, հայցադիմումի պատասխանով ներկայացրել է առարկություններ՝ պահանջելով հայցը մերժել:

Ընդ որում, Փաստաբանի պնդումներն առ այն, որ *նա տեղյակ չի եղել այն մասին, թե Արմեն Մելիքյանն այևս Ընկերության տնօրենը չէ / Արմեն Մելիքյանի հանձնարարությունն ընդունելիս ընկալել է վերջինիս որպես Ընկերության տնօրեն / հիմք է ընդունել Արմեն Մելիքյանի պնդումը իր և Ընկերության շահերի միջև հակասության բացակայության մասին,* Հանձնաժողովը հիմնազուրկ և անտրամաբանական է համարում՝ հաշվի առնելով, որ.

- 28.11.2022 թվականին Փաստաբանին տրվել է լիազորագիր ֆիզիկական անձ Արմեն Մելիքյանի անունից, այլ ոչ թե Ընկերության,
- Արմեն Մելիքյանի Ընկերության տնօրեն չհանդիսանալու փաստի մասին Փաստաբանը տեղյակ է եղել առնվազն 06.06.2023 թվականին, երբ ներկայացրել է հայցադիմումի պատասխան՝ դրանում կատարելով հետևյալ արտահայտությունը. «... ***Ընկերության ներկայիս տնօրեն Վարդան Մուրադյանը, քանի որ բանակցությունները և***

խոսակցությունները վարել միայն Արմեն Մելիքյանը: Ներկայումս Արմեն Մելիքյանը ապօրինի հեռացվել է Ընկերության տնօրենի պաշտոնից ...»,

- անկախ նրանից, թե ինչ տեսլական է ունեցել ֆիզիկական անձ Արմեն Մելիքյանը թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով Ընկերության շահերի վերաբերյալ որպես առանձին սուբյեկտ, նա որևիցե կերպ չէր կարող հանդես գալ կամ գործել Ընկերության շահերից:

Հանձնաժողովը հարկ է համարում փաստել, որ Ընկերությունը բոլոր դեպքերում հանդես է գալիս որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, իսկ իր մարմինների՝ այդ թվում գործադիր մարմնի միջոցով ընդամենը կարող է իրականացնել որոշակի իրավունքներ և կրել պարտավորություններ: Այլ կերպ ասած, այն հանգամանքը, որ Արմեն Մելիքյանը նախկինում հանդիսացել է Ընկերության նախկին տնօրենը և Ընկերության անունից հանդես գալու համար Փաստաբանին տվել է լիազորագիր, որևիցե կերպ չի կարող հիմք հանդիսանալ հետագայում, Ընկերության տնօրենի փոփոխության դեպքում, կոնկրետ գործով ընդունել Արմեն Մելիքյանի պնդումները կամ հիմնավորումներն Ընկերության՝ որպես ինքնուրույն սուբյեկտի և գործով առանձին կողմի շահի գնահատման համար:

Նման պայմաններում Հանձնաժողովն ընդգծում է փաստն առ այն, որ թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով պատասխանող հանդիսացող Արմեն Մելիքյանի անունից հայցադիմումի ընդունմանն ուղղված գործողություն կատարելու և նույն գործով պատասխանող հանդիսացող Ընկերության կողմից ներկայացված հայցի դեմ առարկելու վերաբերյալ փաստի մասին **տեղեկանալու պահից (առնվազն 14.09.2023 թվականը՝ նշված գործով կայացած առաջին դատական նիստը)** առաջացել են հանձնարարության ընդունումը բացառող և/կամ դրա հետագա կատարումից հրաժարվելու հանգամանքներ՝ նախկին վստահորդ Ընկերության և նոր վստահորդ Արմեն Մելիքյանի միջև որպես նշված քաղաքացիական գործերով հակառակորդ կողմերի շահերի հակասություն:

Նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով այն փաստը, որ Ընկերությունը չի տվել իր գրավոր համաձայնությունը Փաստաբանին հետագայում իր՝ որպես նախկին վստահորդի մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար՝ Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությանն ուղղված այնպիսի գործողություններ կատարելով, որոնք հակասել են այդ գործով Ընկերության շահերին, Փաստաբանն արդեն իսկ չէր կարող իրականացնել նրա շահերի պաշտպանությունը, մինչդեռ քննարկման առարկա հանդիսացող իրավիճակում Փաստաբանը ոչ միայն չի դադարեցրել Արմեն Մելիքյանի՝ որպես նոր վստահորդների շահերի պաշտպանությունը, այլ նաև շարունակել է իրականացնել որոշակի գործողություններ այդ կապակցությամբ, որոնք համապատասխանաբար հակադրվել են Ընկերության շահերին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանը, բացահայտելով շահերի հակասության փաստը, չի դադարեցրել նոր վստահորդ Արմեն Մելիքյանի շահերի պաշտպանությունը և փաստացի ծառայություն չի մատուցել վերջինս այն պահից հետո, երբ Արմեն Մելիքյանը 06.11.2024 թվականի դիմումով հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից:

Միաժամանակ, անդրադառնալով Կանոնագրքի 3.2.8 ենթակետի պահանջների խախտմանը, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ.

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:*

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:*

ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.20.16 թվականի թիվ ՍԴՈ 1263 որոշմամբ սահմանել է, *որ փաստաբանության խնդիրն է անձին որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը: Ըստ այդմ, փաստաբանը հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր,* ***անգամ այն դեպքերում, երբ նա արդեն նախկին վստահորդ է:***

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ փաստաբանական գաղտնիքի հասկացությանը տրված է լայն սահմանում, որի ուժով փաստաբանի և վստահորդի հարաբերությունների ամբողջ շրջանակը՝ ներառյալ փոխանցված տեղեկատվությունը, ապացույցները, փաստաբանի կողմից տրամադրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ընկնում են փաստաբանական գաղտնիքի տիրույթի շրջանակ: Ընդ որում, դատելով Օրենքի նշյալ սահմանումից, փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը չի սահմանափակվում դատաքննության ընթացքում ներկայացված՝ գործի հանգամանքներով, ապացույցներով և այլ տվյալներով և ընդգրկում է նաև փաստաբան-վստահորդ շփումների այն մասը, որը չի արտացոլվում գործի շրջանակներում:

Իր հերթին, քննարկելով նախորդ վստահորդի կողմից փաստաբանին վստահված գաղտնիքի բացահայտման վտանգի կամ նրա կողմից նախորդ վստահորդի վերաբերյալ տիրապետվող և նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծող տեղեկատվության առկայությամբ պայմանավորված Փաստաբանի կողմից նոր վստահորդի օգտին գործելուց հրաժարվելու վարքագիծը, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ այդ նորմի պահանջի **խախտումը վրա է հասնում ոչ թե համապատասխան տեղեկատվության բացահայտման կամ դրա հետևանքով նախորդ վստահորդի համար անբարենպաստ հետևանքների առաջացմամբ, այլ միայն դրա հնարավորությամբ:** Հետևապես, եթե առկա է վտանգ կամ հնարավորություն, որ նոր վստահորդի շահերը պաշտպանելով՝ նախկին վստահորդի կողմից փաստաբանին հայտնված գաղտնի տեղեկությունները կարող են բացահայտվել, և (կամ) փաստաբանի կողմից այդ տեղեկատվության տիրապետման հետևանքով կարող է անբարեխիղճ արտոնություն առաջանալ նոր վստահորդի մոտ նախկին վստահորդի նկատմամբ, ապա փաստաբանի

պարտավոր է հրաժարվել նոր վստահորդի օգտին գործելուց: Այսինքն՝ միայն վերոնշյալ հետևանքների առաջացման հնարավորությունը բավական է, որ փաստաբանի համար առաջանա նոր վստահորդի հետ հարաբերությունները խզելու պարտավորությունը, որի չկատարումը հանգեցնում է փաստաբանի կարգապահական պատասխանատվության:

Հարկ է նշել նաև, որ նույնիսկ եթե առկա լիներ վստահորդի գրավոր համաձայնությունը՝ ուղղված փաստաբանին, ապա այն որևէ նշանակություն չէր կարող ունենալ Կանոնագրքի 3.2.8 ենթակետով սահմանված վարքագծի գնահատման համար, քանի որ նշված ենթակետը ուղղակիորեն վերաբերում է այն դեպքերին, երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ տեղեկությունը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:

Ըստ այդմ, որոշմամբ անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների առկայությանը, Հանձնաժողովն արդեն իսկ արձանագրել է թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանի նոր վստահորդ պատասխանող՝ Արմեն Մելիքյանի և նախկին վստահորդ պատասխանող՝ Ընկերության շահերի հակասության առկայության փաստը:

Ընդ որում, առավել ուշագրավ է այն փաստը, որ Փաստաբանը, թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով հանդիսանալով Ընկերության ներկայացուցիչը, վերջինիս անունից ներկայացրել է դիմում՝ Կարեն Սահակյանի սնանկ ճանաչելու մասին՝ **դրա հիմքում դնելով Ընկերության,** ի դեմս նախկին տնօրեն **Արմեն Մելիքյանի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագիրը**, ինչի արդյունքում էլ Կարեն Սահակյանը ճանաչվել է սնանկ:

Այնուհետև, թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով, որի շրջանակներում **«Եվան Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայցադիմում** ընդդեմ **պատասխանողներ Ընկերության**, Կարեն Սահակյանի և **Արմեն Մելիքյանի՝** պահանջելով՝ *պատճառված վնասի հատուցման պահանջի զիջման համաձայնությունը ճանաչել չկնքված, որպես հետևանք* ***անվավեր ճանաչել «Սքայլըլլոու Թրեյդինգ Սըլուշենս» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման կատարման պայմանագիրը***, Փաստաբանն արդեն հանդես է եկել որպես պատասխանող Արմեն Մելիքյանի ներկայացուցիչ:

Այսինքն, ինչպես **թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով,** այնպես էլ **թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործով,** ուղղակիորեն քննարկման առարկա է դառնում **Ընկերության, ի դեմս նախկին տնօրեն՝ Արմեն Մելիքյանի և Կարեն Սահակյանի միջև 01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագիրը,** որի վերաբերյալ Փաստաբանն արդեն իսկ ունեցել է որոշակի տեղեկություններ դեռևս սնանկության վարույթից:

Այս համատեքստում, ակնհայտ է դառնում, որ Ընկերությունը՝ որպես նախկին վստահորդ հայտնել է Փաստաբանին որոշակի տեղեկատվություն **01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագրի վերաբերյալ**, որոնք որևիցե դեպքում չէին կարող և չպետք է բացահայտվեին կամ օգտագործվեին իր դեմ, անկախ նրանից թե ով է զբաղեցնում Ընկերության տնօրենի պաշտոնը:

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանը, Արմեն Մելիքյանի անունից **06.06.2023 թվականին ներկայացնելով հայցադիմումի պատասխան** «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի վերաբերյալ, ըստ էության ոչ միայն բացահայտել է այնպիսի

տեղեկություններ, որոնք ուղղակիորեն վերաբերել են **01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագրին,** այլ նաև հակասության մեջ են գտնվել Ընկերության ընդհանուր դիրքորոշման հետ, փաստացի այնպիսի իրավիճակ, երբ Փաստաբանի նոր վստահորդ պատասխանող Արմեն Մելիքյանն ընդունել է հայցը, իսկ նախկին վստահորդ պատասխանող Ընկերությունն առարկել է դրա դեմ:

Ընդ որում, նկատի ունենալով, որ Արմեն Մելիքյանը հանդիսանում է Ընկերության նախկին տնօրեն, Փաստաբանը վերջինիս անունից ներկայացված հայցադիմումի պատասխանում նշել է *«Ընկերության, ի դեմս Արմեն Մելիքյանի, որպես տնօրեն և Կարեն Սահակյանի միջև 01.06.2023թ. կնքվել է պարտքի ճանաչման և կատարման պայմանագիր:* ***Պայմանագիրը կնքելիս Արմեն Մելիքյանը որևէ լիազորագրի հիման վրա հանդես չի եկել որպես «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ*** *և պայմանագիրը կնքել է առանց համապատասխան լիազորություններ ունենալու, հետագայում Կարեն Սահակյանի և Ընկերության միջև կնքված* ***պայմանագրին «Եվան Գրուպ» ՍՊԸ-ն հավանություն չի տվել:*** *... Պարտքը ճանաչելու և կատարելու մասին* ***պայմանագիրը համարում ենք շինծու գործարք*** *և գտնում ենք, որ իրականում այն պետք է կնքվեր «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև:...»:*

Նշվածն առնվազն բավարար է Հանձնաժողովի համար ողջամիտ համոզմունք ձևավորելու և եզրահանգելու այն, որ քննարկման առարկա իրավիճակում ոչ միայն առկա էր կամ կարող է առաջանալ, այլ նաև փաստացի առաջացել է Ընկերության կողմից Փաստաբանին վստահված գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվություն բացահայտման վտանգ, որը անբարեխիղճ արտոնություն է ստեղծել նոր վստահորդ Արմեն Մելիքյանի համար, քանի որ դրանք ուղղակիորեն վերաբերել են **01.06.2018թ. կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագրին**:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող*

կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը, որը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների բնույթից:

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ ***սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով*** *նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:*

Վերոգրյալ նորմից հետևում է, որ Հանձնաժողովին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ դեպքում, Փաստաբանը մեղավոր է ճանաչվել նաև «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի խախտման համար, ինչը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև համանման գործերով Խորհրդի կողմից նախկին նշանակված տույժերին:

Մասնավորապես, փաստաբան Ռոմեն Ահարոնյանը Պալատի Խորհրդի 27.08.2012թ. թիվ 25 նիստի թիվ 21/1-Ա որոշմամբ ճանաչվել է մեղավոր Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.8-րդ հոդվածի պահանջների խախտման համար, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տույժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին, վեց ամսվա ընթացքում տասներկու ժամ, մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիմնախնդիրները» թեմայով այն բանի համար, որ Ռոմեն Ահարոնյանը որպես «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ ներկայացուցիչ պաշտպանել է վերջինիս շահերը ընդդեմ «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ աշխատակիցների, **իսկ փաստաբան դառնալուց հետո իրավաբանական օգնություն է ցույց տվել «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ նախկին աշխատակիցներին:**

Քննարկվող երկու գործերում կարևորը նախկին և ներկա վստահորդներին իրավաբանական ծառայությունների մատուցումն է այդ վստահորդների միջև շահերի հակասության պայմաններում, որպիսի հանգամանքն առկա է ինչպես Փաստաբանի, այնպես էլ փաստաբան Ռոմեն Ահարոնյանի գործերի պարագայում:

Մեղքի ապրիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանը, նախկին և ներկա վստահորդների շահերի հակասության և նախկին վստահորդի համաձայնության բացակայության պայմաններում, ոչ միայն միջոցներ չի ձեռնարկել նոր վստահորդի կողմից տրվող հանձնարարության ընդունումից և/կամ դրա հետագա կատարումից հրաժարվելու ուղղությամբ, այլ նաև նշված փաստը բացահայտելու պայմաններում, չի դադարեցրել նոր վստահորդի շահերի պաշտպանությունը:

Հարկ է նաև նշել, որ Փաստաբանը մեղավոր է ճանաչվել նաև Կանոնագրքի 3.2.8 ենթակետերի խախտման համար, հետևաբար նույնիսկ եթե առկա լիներ վստահորդի գրավոր համաձայնությունը՝ ուղղված փաստաբանին, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի վրա այն չի կարող տարածվել:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանի բովանդակությունից, ինչպես նաև այլ դատավարական փաստաթղթերից և գործողություններից հետևում է, որ Փաստաբանը հստակորեն գիտակցել է, որ ներկայացնելով իր նոր վստահորդի շահերն ընդդեմ նախկին վստահորդի, այն դեպքում, երբ իր նախկին և նոր վստահորդների միջև առկա է շահերի բախում, և առկա է նախկին վստահորդ Ընկերության կողմից Փաստաբանին վստահված տեղեկատվության բացահայտման և այդ տեղեկատվությանը Փաստաբանի տիրապետման ուժով նրա նոր վստահորդ, Արմեն Մելիքյանի համար անբարեխիղճ արտոնության առաջացման հնարավորություն, խախտում է Օրենքի և Կանոնագրքի պահանջները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ վստահորդների շահերի հակասության դեպքում, փաստաբանի նմանատիպ վարքագիծը վարկաբեկում է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը և հասարակության մոտ փաստաբանի դերի և նշանակության վերաբերյալ բացասական կարծիք է ձևավորում:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր նախկին վստահորդ՝ Դիմոնի, ում շահերը պետք է պաշտպաներ մշտապես, անկախ փաստացի ներկայացուցիչ լինելու հանգամանքի, ինչի արդյունքում թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով հայցը բավարարվելու պարագայում Դիմոնի՝ որպես գործով պատասխանող-Ընկերության համար առաջանալու են անբարենպաստ հետևանքներ, որոնք կրելու է միայն վերջինս՝ որպես իրավունքի առանձին սուբյեկտ, անկախ նրանից, թե ով է փաստացի զբաղեցնելու տնօրենի պաշտոնը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայության փաստը, և միայն այդ հանգամանքի հաշվառմամբ չի կիրառում ամենախիստ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» տույժի տեսակը, որը ելնելով սույն գործով Փաստաբանին վերագրվող վարքագծի և հաստատված փաստերի համատեքստում, կարող էր կիրառվել ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նշանակությունը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ «տուգանք» նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնտոլոգիա» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Ավագ Մովսեսի Լալայանի (արտոնագիր՝ թիվ 535) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24180-2-Ա
07 մայիսի 2025թ.
ք.Երևան